# ՑՈՒՑԱԿ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

## ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

## (1512 — 1800)

### 41

ՌՈԲԵՐԹՈՍ ՊԵԼԼԱՐՄԻՆՈՍ. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ։ Թրգմ. Բարսեղ Վրդ. Կոստանդնուպոլսեցի։ Հռոմ, տպ. Հաւատոյ Տարածման (Propaganda Fide), 1680. 445 + 8 չհ. = 453 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

Dichiaratione piu copiosa della DOTTRINA CHRISTIANA Composta dal Card. Bellarmino. E tradotta dalla Italiana nella lingua Armena dal D. Basilio Barsech Sacerdote Armeno.

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ։ Գերազանցագունեղի Կարտինալի Տեառն Ռուպերթոսի Պելլարմինոսի։ Թարգմանեցեալ ի Բարսղէ Վարդապետէ Կոստանդինուպոլսեցւոյ։ Ի լեզուէ Իտալականէ ի Հայկական բարբառ. Յամի տեառն. 1680. ի մեծն Հռոմ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան

238

1680

### 42

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ։ Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառպոնի, 1680. 16 չհ. + 532 = 548 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ըստ Մատթէոսի ըստ Մարկոսի ըստ Ղուկասու եւ ըստ Յոհաննու. Տպագրեցեալ հրամանաւ աւթօրիդին ի տպարանի Միքայէլի Պառպոնի ի վէնէտիկ քաղաքի. յամի տեառն 1680.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան Գրգոյս.

Փառք եւ գոհութիւն եւ երկրպագութիւն կենսատուին մերոյ Յիսուսի, որ ետ զկա—

digitised by A.R.A.R.@

բաղութիւն նուաստացելոց աշխատաւորացս հասանել ի վախճան սորոյ աւետարանիս. Եւ շնորհակալութիւն ամենապանծելոյ կուսին մարիամու, որ իւրով մայրականաւ գթութեամբն պահեաց զմեզ առողջ եւ անփորձ ըն բնաւում այսմիկ գործառնութեան. Զոր աւարտեալ կատարեցաք յամի տեառն 1680. եւ ըստ հայոց ռճիթ, յամսեանն օգոստոսի, ի վէնէտիկ քաղաքի, ի վեհապետութեան եկեղեցւոյն քրիստոսի Իննոչէնցիոսի մետասաներորդի, եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթուղիկոսին հայկազունեաց. Արդ որք վայելէք զսա ընթեռնլով եւ կամ օրինակելով, յիշեցէք ի քրիստոս մեով հայրմերիւ զձուղայեցի կէրէկ գրիգորն հանդերձ ընտանեօքն. որ զոյիւք եւ արդեամբք իւրովք հանեցաւ բազմածախել զսոյն ի լոյս եւ ի շահաւէտութիւն հայոց բարեխօրաց. Եւ զմեզ յիշեցեալք լիջիք ի քրիստոսէ ի միւս անգամ գալստեան նորին ամէն.

Նիւլպէնկեան Մատենադարան

225.4

1680

## 43

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԵՑԻ (ՀՈԼՈՎ). ՀԱՅԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ: Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառպոնի, 1680, 8 չփ. + 200 էջ = 208 էջ:

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

SPECULUM VERITATIS Continens particularem quamdam instructionem fidei Catholicae Apostolicae ac Romanae, Compositum a D. Ioanne Agaup Missionario Apostolico.

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ՀԱՅԵԼԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ. Պարունակող Մասնաւորի Ուրուք Ներկրթութեան Ուղղափառ Հաւատոյ Ի պէտս Հայոց Ճշմարտասիրաց. Շարադրեցեալ ի Յովհաննիսէ Վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ ի փառս մեծագոյն աստուծոյ. Եւ տպագրեցեալ ի տպարանի Միքայէլի Պառպոնի յամի տեառն. 1680. ի վէնէտիկ քաղաքի.

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Զանի:

ՆՇՈՒՄ. Հեղինակին «Տրակ առ ընթերցողս Հայկազինաչն»

«... Ուրեմն եթէ ոք ի բարեսիրաց ընթերցմամբ սորին զգտցէ ինչ փերտշահիցի, համարեսցի զայն ի փառս աստուծոյ, իսկ եթէ ոչ, աղերսեմ ներեսցէ ինձ դարձեալ ի փառս աստուծոյ քանզի ես ամենեցուն եմ ծառայ անպիտան. Յովհաննէս Հոլով.

Աղաչեմ յիշել ի քրիստոս մեով հայր մերիւ զաշխատասիրեալ պատանին զկէրէք աղայն, զորդի Պարոն Գրիգորի Կէրէքեան Ճուղայեցւոյ ընտանեօք եւ ազգականօքն հանդերձ, որ զիս իբրեւ եղբայր սիրելի յօրդորեաց առ այս գործ բարի, առեն տեղեկանալոյ մանկանցն հաւատոյ կաթուղիկէի եկեղեցւոյն քրիստոսի համէտականի, եւ ճանաչելոյ զճշմարտութիւն նոցին, եւ զմեզ յիշեցեալք լիջիք ի քրիստոսէ ի միւս անգամ գալստեան նորին»:

Նիւլպէնկեան Մատենադարան

230. 2

1680

digitised by A.R.A.R.@

## 44

ՏԱՂԱՐԱՆ։ Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառոնի, 1681. 8 չհ. և 126 = 134 էջ (պակասաւոր)։

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

**ՏԱՂԱՐԱՆ** (պատուական) և գեղեցիկ ի զանազանից բանաստեղծից շարադրեցեալ ի խրախճանս Հայոց բարեկարգից և աշխարհատիրաց. ժողովեցեալ և սրբագրեցեալ ի յոհաննիսէ վարդապետէ կոստանդնուպօլսեցւոյ ի փառս մեծագոյն աստուծոյ Եւ տպագրեցեալ ի վէնէտիկ քաղաքի ի տպարանի Անճէլօ պառոնի ի Թվին. ռճլ. յամսեանն յուլիսի ի տասն.

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի Թուին Հայոց, ռճլ. մայիսի ամսոյ ի. ի. աւարտեցաւ տաղարանս այս վայելուչ և գեղեցիկ ի վէնէտիկ քաղաքի. Երկամբք և աշխատանօք յոհաննիսի վարդապետիս կոստանդինուպօլսեցւոյ որ տեսանելով զիղձ և զցանկութիւնս մերոց Հայկազանց վաճառականաց, կամեցայ ի զանազանից բանաստեղծաց ժողովել զսոյն, և տպագրութեամբ բազմապատկել և ի լոյս ածել ի յիշատակ նոցին. Արդ որք հանդիպիք սմա վայելելով կամ օրինակելով յիշեցէք մեով հայր մերիւ ծնողս և զազգակիցս և զընտրեալ եղբարս մերս ի քրիստոս. և մանաւանդ զջուղայեցի սահրատի որդի զպարոն զասպարն, զջուղայեցի կէրէքենց գրիգորի որդի զկէրէք աղայն. զագուլեցի կուլնազարի որդի զպարոն նահապետն, զջուղայեցի յոհանիսի որդի զպարոն ճավրին. զջուղայեցի գրիգորի որդի զպարոն ակոբճանն, զջուղայեցի ալամենց զպարոն աղամատուրն, զջուղայեցի պապաճանի որդի զպարոն սաւփյին. զջուղայեցի պետրոսի որդի զպարոն խաչիկն. զջուղայեցի ճիհանկիրենց զպարոն բաբաղամն զջուղայեցի նիկողայոսի որդի զպարոն աստուածատուրն. զագուլեցի մարտիրոսի որդի զպարոն ոսկանն, զագուլեցի հախնազարի որդի զպարոն կարապետն. զվանեցի դաւթի որդի զպարոն փանոսն, և զեղբայրն իւր զսաֆարն, զջուղայեցի գրիգորի որդի զպարոն առաքէլն. զջուղայեցի նանենց պարոն յուսէփն, զջուղայեցի վարդանի որդի զպարոն ամիրպէկն. և զայլս, և դուք յիշեալք ի քրիստոս է այժմ և ի միւս անգամ գալստեան նորին ամէն.

Եւ եթէ շահիցիք ինչ ի սմանէ լիցի այն՝ ի փառս և ի գովութիւն երանուհւոյ կուսին մարիամու, իսկ եթէ ոչ, ներեցէք ինձ վասն աստուծոյ. ողջ լերուք.

ԾԱՆՕԹ. Մեր օրինակը թերի է: Ինկած է էջ 126–էն սկսեալ մասը: Չենք գիտեր թէ ամբողջ գիրքը քանի՞ էջ եղած է, քանի որ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»ին մէջ չէ յիշուած ան, մեզի անծանօթ պատճառով մը:

Կիւլպէնկեան Մատենադարան

264·4

1681

## 45

ՆՈՐԱԳՈՅՆ ԾԱՂԻԿ ՋՕՐՈՒԹԵԱՆՑ։ Թրգմ. Յովհաննէս Վարդապետ Կոստանդնուպոլսեցի։ Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառոնի, 1685. 237 էջ։

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

**ՆՈՐԱԳՈՅՆ ԾԱՂԻԿ ՋՕՐՈՒԹԵԱՆՑ** Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ կոստանդնուպօլսեցւոյ ի փառս մեծագոյն աստուծոյ. Եւ տպագրեցեալ ի վէնէտիկ քաղաքի. յամի ներմարմնութեան տեառն ռոձե. և ըստ Հայոց ռճլդ. ի հայրապետութեան տեառն Եղիազարու սրբազան կաթուղիկոսի. արդեամբք և ծախիւք ոսկանայ ագուլեցւոյ որդւոյ մարտիրոսի ի վայելումն և ի հրճուանս հայկազանց բարեսիրաց:

digitised by A.R.A.R.@

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Աւարտեցաւ գիրքս տպագրութեամբ փիլիսոփայից ի Թվին փրկչին ռձե, սեպտեմբերի ամսոյ. Է. ի վէնէտիկ քաղաքի, շնորհօք եւ նպաստութեամբ ամենազօրին աստուծոյ. Արդ որք վայելէք զսա վարժելով եւ կրթելով զմիտս ձեր յիշեսջիք յաղօթս զմատակարարս սորին, եւ զուք ողջ լերուք ի տէր:

Կիւլպէնկեան Մատենադարան

230·2

1685

46

ՌՈՒՐԱՍՏԱՆ ԱՂՕԹԻՑ: Թրգմ. Ստեփաննոս Վարդապետ Լեհացի: Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառպոնի, 1685. 47 + 1 չհ. + 275 = 323 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՌՈՒՐԱՍՏԱՆ ԱՂՕԹԻՑ. յորում պարունակին բանք մաղթանաց եւ խօսք ընդ աստուծոյ յոյժ պիտանիք յարմարեցեալք ըստ եօթանց աւուրցն շաբաթու ի յօգուտ եւ ի շահաւէտութիւն անձանց քրիստոնէից. Թարգմանեցեալ ի լաթինացւոց լեզուէ ի հայկական բարբառ աշխատասիրութեամբ ուրումն ստեփաննոսի վարդապետի լեհացւոյ ի փառս մեծազօրին աստուծոյ: Եւ տպագրեցեալ ըստ խնդրոյ ճուղայեցի խօճայ սահրատի որդի պարոն գասպարին ի յըրօմանս հայկազունեաց. յամի տեառն հազար վեցհարիւր ութսուն եւ հինգերորդի ի վէնէտիկ քաղաքի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան Գրքոյս.

Փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն ամենասրբոյ երրորդութեանն Հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ միոյ աստուծոյ ճշմարտի կենդանւոյ եւ յաւիտենականի, որ ետ զկարողութիւն մեղուցելոցս անձանց ժամանելոյ ի վախճան տպագրութեան բուրաստանիս աղօթից. միջնորդութեամբ եւ բարեխօսութեամբ անարատ հարսին իւրոյ եւ միշտ կուսին մարիամու, եւ աղօթիւք ամենից սրբոց, քանզի մեծաւ աշխատութեամբ եւ հոգաբարձութեամբ սրբագրեցաք զսոյն, եւ յարդարեալ բարեկարգեցաք ի պէտս եւ ի շահաւէտութիւն հայկազնեաց բարեսիրաց, որպէսզի ամենեքեան կարիցեն դիւրապէս վայելել եւ ի կիր արկանել զսոյն ի կեցութիւն հոգեաց իւրեանց, եւ զայս ըստ ըղձից եւ ըստ թախանձանաց ճուղայեցի խօճայ սահրատի որդի պարոն Գասպարի, առն ճշմարտասիրի եւ ազնուատոհմի բարեպաշտութեամբ եւ զարմիւ ճոխացելոյ ի Ներկայում այսմիկ ժամանակի, որ ամենայնիւ փութով հոգացեալ զթարգմանութիւն սորին արդեամբք եւ գոյիւք իւրովք սեփականօք խոհեմապէս հաճեցաւ ի լոյս ածել զսոյն, ի յիշատակ անջրելի ինքեան եւ բնաւից ընտանեաց եւ ազգականաց իւրոց, ի խնդութիւն եւ ի հրճուանս համայնից սիրելեաց եւ բարեկամաց իւրոց ի քրիստոս, եւ ի սփոփանս հանուրց աստուածաւորաց ընթերցողաց. արդ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ օրինակելով յիշեսջիք ի սրբազան յաղօթս ձեր զպատճառս եւ զմատակարարս սորին ընդ որս եւ զուք յիշեալք լիջիք ի քրիստոսէ յաւուրն մեծմէ այժմ եւ ի միւսանգամ գալստեանն նորին, ամէն:

էջ 274–275:

Կիւլպէնկեան Մատենադարան

248

1685

digitised by A.R.A.R.@

## 47

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ: Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառայոնի, 1685. 18 չհ. + 43 + 2 չհ. = 450 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ Տեառն Մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի Տպագրեցեալ ի Թուին Հայոց ռճլդ ի ժդ Օգոստոսի Ամսոյն. ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Եղիազարու Սրբազան Կաթուղիկոսի Համօրից Հայկազունեաց. Արդեամբք եւ Գոյիւք Աղուլեցի Մարտիրոսի Որդի Ոսկանին: Ի Վէնէտիկ Քաղաքի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Աւարտեցաւ տպագրութիւն վայելչատիպ սրբոյ աւետարանիս, ի լաւ եւ յընտիր օրինակէ, յամի մարդեղութեան տեառն, ռոձգ. եւ ի թուաբերութեան հայոց. ռճլե. ի ժդ. մայիսի ամսոյն ի վէնէտիկ քաղաքի, բազում երկամբք եւ աշխատանօք, վասն ոչ գտանելոյ զհամաձայնութիւն համարաբերացն, ի պատճառս անհոգութեան գրչացն, առ որ տաժանեալք զբազում աւուրս ստուգադրեցաք, որոշելով զթիւս մանրագիրս համաձայնութեանց, գլխագրակագիրս, զցանկս եւ զկանոնագիրս. ի պէտս ուսումնասիրաց. եւ ի սփոփանս ճշմարտասիրաց: Արդ որք հանդիպիք սմա վայելելով եւ կամ օրինակելով, զթողութիւն շնորհեցէք խրթնութեան գրոյս, զի հազիւ կարացաք հնարել զսոյն. եւ եթէ պատահմամբ գիր ինչ սխալեցեալ իցէ ներեցէք, քանզի ջանք եւ զգուշութիւն մեր էր ամենեւին անսխալապէս յառաջագրել զսոյն սիրելեաց եղբարցդ մերոց ի քրիստոս. եւ զի մինչեւ ցայժմ համարաբանիւք աւետարան ոչ էր տպեցեալ երբեք վասն դժուարութեան զանազանից թուոցն, մեք վասն պայծառութեան հայոց յանձն առաք զամենայն դժուարութիւն, որպէսզի սփռեալ տարածեսցի ի մէջ ձերում, ի փառս ամենասրբոյ երրորդութեան եւ ի պատիւ երանուհւոյ կուսին մարիամու. որ է բարեխօս առ որդին իւր միածին վասն փրկութեան ամենայն քրիստոնէից եւ մանաւանդ վասն այնոցիկ որք յիշեն ի մաքրափայլ յաղօթս իւրեանց զաշխատաւորս եւ զմատակարարս սորին. ամէն:

Կիւլպէնկեան Մատենադարան

225·4

1685

## 48

ՏՕՄԱՐ: Վենետիկ, տպ. Միքէլանճելօ Պառայոնի, 1685, 320 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՑ ՀԱՅՈՑ, Աղարիայի, եւ Հռոմայեցւոց. ընդ որս եւ Պարզատոմար, լուսանացոյց, եւ Արեգակացոյց, ի ստոյգ եւ ի վայելուչ օրինակէ զաղափարեցեալ. Եւ տպագրեցեալ ի Թուիս հայոց ռճլդ. ի Վէնէտիկ քաղաքի, ի յօգուտ ուսումնասիրաց, ի Հայրապետութեան տեառն Եղիազարու սրբազանի կաթուղիկոսին եւ պատրիարգին Հայաստանեաց. զոր տէր աստուած անփորձ եւ անսասան պահեսցէ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի:

Կիւլպէնկեան Մատենադարան

264·11

1685

digitised by A.R.A.R.@

49

ՇԱՐԱԿՆՈՑ։ Ամստերդամ, տպ. Մատթէոս Վանանդեցի, 1687. 780 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՇԱՐԱԿՆՈՑ։ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՔ։ Աստուածայնոց և երջանկաց սրբոց վարդապետաց հայոց թարգմանչաց։ Զհարդաւորութիւնս եկեղեցւոյ վայելչացուցանողաց։ Տպեցեալ Ամստէլրտամում քաղաքի։ Յամի Տեառն, 1685։ Սեպտեմբերի. 21։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Յանուն սրբոյ Խաչի։ և ամէնօրհնեալսյ սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին։ Մատթէոս Յօհաննիսի. Դողթնական Վանանդեցի։ Տպարարդող այսորիկ Գրքիս։

էջ 3

. . . . . . . . . . . . . . . . . . . . .

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ողորմութեամբ նորին յանկ եկեալ աւարտեցաւ գիրքս երաժշտական, որ է շարակնոց։ Ի տպարանի մատթէոսի վանանդեցւոյ. որ եմ անուամբ յանուն սրբոյ Խաչի և ամէնօրհնեալսյ կուսին Մարիամու Աստուածածնի։ Ի հայրապետութեան տեառն Եղիազարու ամենայն հայոց Կաթուղիկոսի և յաջորդ սրբոյ առաքելոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյն գրիգորի լուսաւորչին։ Եւ նուաստս յամենից մատթէոս գրիչս եկի ծառայելով ընդ արենակից վարդապետին իմոյ յերկիրն յիտալացւոց և ի մայրաքաղաքն Հռոմ, և վեհն իմ գնաց յայլ ուրեք. և ես դարձեալ յայսկոյնոյ առ ոտս աշակերտի տեառն ոսկանայ արհիեպիսկոպոսի տեառն կարապետի վարդապետի, և ուսայ ի նմանէ զարհեստ տպագրութեան, և մնացի ընդ վեհին ոսկանայ արհիեպիսկոպոսի և քեռորդւոյ նորա աղօթանք ամս չորեքտասան և վարձու ցկողմանէ ուրեք ընկալայ. բանզի և տէր Յակոբ Կաթուղիկոսն գրեաց առ իս ի մարսիլիայ թէ ընկալայ ըզհամբաւ ի քէն գրաւոր ուսանելոյն դարձեալ. վասն որոյ և զկոնդ նամակս օրհնութեան առաքեցի առ հոգևոր որդեակդ իմ մատթէոս զի բարւոք ծառայեցես տեառն ոսկանայ արհիեպիսկոպոսի աշակերտի իմոյ, և զկնի վախճանի նորա մի ումեք կարօտացես՝ այլ համարեա՛ թէ ինձ ես արարեալ որպէս առ Տէ՛րն։ և ես զքո վարձն հատուցանելոց եմ, և եթէ մահ հասանելոց հանդիպի՝ զհետամնեաց նրաւոր որդոյն աթոռոյն պարտին հատուցանել։ սակս որոյ ժամանակս բազումս ծառայեցի. և զկնի փոխելոյն նորա առ աստուած, և իմ տեսեալ զշարակնութիւն և զանտերութիւն յամենայն կողմանց. վասն որոյ գիմեցի յերկիրն հոլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքն յամստէլդամ, և գտի զյաւ վարպետ ինձ, որ անուամբ Նիկոլայոս տաք. և եւաւ յօրինել զգիրս այսուբենից բազմօք աշխատանօք. և զայլ սեաւս եւս գրոց նշանի և բոլորի։

Եւ ի աւարտումն գործոյս՝ ո՛չ ունելով բաւականապէս զդրամս վասն տպելոյ զգիրս. և ընկերացայ ընդ տեառն յոհաննու երևանեցւոյ սրբանուէր քահանայի և ընդ ջուղայեցի պարոն պօղոսին սակս երկուց գրոց միայն շարակնոցի և ժամագրքի։

Արդ երես անկեալ աղաչեմ զընթերցողդ յիշել զերեսանցի պարոն աւգուստի որդի զտէր յոհան սրբանուէր քահանայն, և զհանգուցեալ ծնողսն զհայր իւր զպարոն աւգուստն և զմայր նորին զմասումխաթունն, և զեղբարսն իւր եղիսաբէթն՝ և զեղբայրս նորին զպարոն աւետիքն և զպարոն կարապետն՝ և քորք իւրեանց զխաթունն զրէհին զմարիամն և զկատարինէն, և զայլ արենաւոռ մերձաւորսն. բանզի աշխատեալ ի սրբագրութիւն շարակնոցին և զթուղթ չորացնելն և զայլ աշխատանս։ Նաև զջուղայեցի ընկերն մեր զուլխաթէնց խաճայ ալէքսանի որդի պարոն պօղոսն և զեղբայր նորին զպարոն պետրոսն, և զմայր նոցին զախին ասփիայն և զհայր բուրեանց զախին եփրոսիմեայն և զդուստր բոլ նորա մագդալինէն՝ և զայլ արենաւոռ մերձաւորս։

Նաև յետոյ և զմեղապարտ զգիր մատթէոս շարադրողս և մատակարարս և

digitised by A.R.A.R.@

*օգնիչ որդեգրութեան. յիշեսջիք զծնօղսն իմ զՕհաննէսն եւ զմարիամն եւ զայլ արեանառու մերձաւորսն: յիշեալ զմեզ հայր մեղայի. վասն որոյ եւ դուք յիշեալք լիջիք ի Քրիստոսէ յաւուրն մերոյ. Ամէն:*

*Արդ զտրձեալ աղաչեմ, որք հանդիպիք տառաւածային երգարանիս այսմիկ՝ ընթեռնլով, կամ հարեւանցի զրանլով. Աստուած աղարմեցի միով յիշատակել մի խնայէք, զի կարի աշխատեցար ի որդեգրութեան գործ. թէ ի հոլովս տնաւորը՝ եւ ի նախագրութիւնս նոցա. թէ ի ժամանակս բայից. եւ ի կերպաւորութիւնս նոցա, հետեւելով հնատարին օրինակին: վասն որոյ եթէ ոք հմուտ է քերթութեան. եւ փորձ գրչութեան օրինակելոյ. գտցէ եւ ոչինչ պակասեալ ի գրելոց նայքին: բայեւր եղեւ բայքն զոր եթէ ոք քննեսցէ բառ խոնարհմանց բայիցն, գտցէ զհաւատսին: Նաեւ սակս անհրեւութեան այլակերպութեան խնդրեմ մի փրդովիք. այլ խոհեմարար քննել. եւ ըստ բային իւրոց համեմատել եւ զկերպաւորութիւն բային ներ ներկայում սահմանականին խուզել. զի մի անհեթեթ լիցի եւ վարկպարդի: Եւ թէ այլ ինչ սխալութիւն գտցի այն չէ ի կամաց մերոց այլ ի մոռացմանէ. եւ կամ այլ իմն կասկածանաց. վասն որոյ խնդրեմ ներել. զպակասն լնուլ եւ զաւելորդն յապաւել. որք հմուտ էք արհեստի եւ մակացութեան. եւ զմեզ պահել անմեղադրելի: Իսկ որք ոչ էք նեև հմտացեալ արհեստից գրչութեան եւ քերթողութեան. մի այլ ինչ բարբառէք յանդգնաբար. այլ ջանացարուք ուսանել զգրեալսն. եւ տեղեկանալ նեև պատուիրեալ զխասութեան. եւ փառս վերընծայել քրիստոսի աստուծոյ ընդ հօր եւ որդւոյ հոգւոյն. այժմ եւ անզրաւ յաւիտենիս. ամէն:*

Էջ 777–780

*Կիւլպէնկեան Մատենադարան*

264·7

1685

## 50

*ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ* (*Ժամագիրք*): *Ամստերդամ, տպ. Մատթէոս Վանանդեցի*, 1686, 670 էջ:

***ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ***

Ինկած է:

***ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա***

*Ազդմամբ եւ աջողմամբ ամենազօր եւ մարդասէր սուրբ հոգւոյն. ձեռնարկաք զնոր մատեանս զայս տպագրել՝ առ ի օգտութիւն արամեանս զարմի, եւ ի յաւատարութիւն մանկանց եկեղեցւոյ. նաեւ ի պայծառութիւն նորայս սիոնի:*

*Իսկ ի յաւուրմն ժամակարգութեան ի պատճառս աղօթից. ի գիտութիւն խորհրդոյ հաւատոյս: ի զղջումն մեղուցելոց. ի սէր զղջացելոց. ի թողութիւն մեղաց. ի յոյս բարեաց. ի հետեւումն աստուածային պատուիրանաց եւ ի կրթութիւն գործոց առաքինութեանց: որք կամաւ ողջունեն եւ հետեւին սիրով ջերմեռանդութեամբ. Վասն որոյ ապեցինք զայս աստուածային նմանեանս՝ զիւրազին եւ ձեռնհաս եւ ամենեցուն առանալի, բայց ապաւինելով յամենակարող զօրութիւն հոգւոյն սրբոյ, զհիմն եդինք գործոյս. իսկ զկատարումն նմա ապաստան արարեալ. յուսամք զի ըստ խիրում առատ մարդասիրութեան, հասանիցի ի թիկունս տկարութեան մերոյ. եւ տացէ յանդուգնեալ զաւաջնակայ գործաւորութիւնս՝ առանց ամօթոյ, անվթար եւ դիւրաբար. աղօթիւք սուրբ հօրն հաւու եւ հեղինակի. եւ համահաղոյն միարան եղբարցդ:*

*Զոր ապեալ եղեւ ի թուոյ փրկչին* 1686: *իսկ ըստ Հայոց, ռձլե: Մայիսի,* 17: *Ի հովուապետութեան գերերջանկապունեղի Տեառն Եղէազարու նախորդի երից եղանելոյ Կաթուղիկոսին՝ ամենայն հայոց, եւ մեծի Պատրիարգին. Քրիստոսէջ եւ բրօրէախումբ հրեշտակայար, եւ սրբերապումար, յաւաշհեղոյս եւ երկնահանգէտ՝ զահոյին սրբոյ էջմիածնի: Ցերկրին յօլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքին յամստէլտամ:*

digitised by A.R.A.R.@

Ի տպարանի մաթէոսի վանանդեցւոյ։

Յանուն որդւոյ Աստուծոյ և ամենօրհնեալոյ սրբուհւոյ կուսին Մարիամու Աստուածածնին։

Տէ՛ր Յիսուս օգնեա՛ ինձ և հասո՛ գեղեցիկ յաւարտ. ի պատիւ ամենօրհնեալոյ սրբուհւոյ մօր քոյ և կուսի։ այլև ամենայն ընթերցողաց քոց որդոց։

Վասն մերոյ բաժակի. անկար կամարն եղեւ։

Մաթէոս յոհաննիսի, գողթնական վանանդեցի, շարադրող տպարկի գրքի։

էջ 3–5

. . . . . . . . . . . . . . . . . . . . . .

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Յիշատակարան ժամագրքիս։

Ողորմութեամբն աստուծոյ և միով հոգւոյն սրբոյ, և բարեխօսութեամբ ամենօրհնեալոյ սրբուհւոյ կուսին մարիամու աստուածածնին։ Աւարտեցաւ ժամակարգութեան գիրքս վայելուչ որ տառ և անտի հաւաքեալք են ի մի վայր. ի պէտս եկեղեցեաց հայաստանեայց։ Յամի փրկչին. 1686 Սեպտեմբերի ամսոյ ի հինգն։

Ի տպարանի մաթէոսի յամենավայելուչ քաղաքէն վանանդայ։

Արդ որք հանդիպիք Աստուածային երգարանիս, յիշեսջիք զընկերն իմ զերեւանեցի զակէր յոհան որդանուէր քահանայն՝ և զջուղայեցի պարոն պօղոսն, քանզի ո՛չ ունելով բաւականալիս զդրամս տպելոյ զայս երկու գրեանս, վասն որոյ հարկաւորեցայ ընկերանալ ընդ տեառն յոհաննու որդանուէր քահանայի և ընդ ջուղայեցի պարոն պօղոսին, առնել երկուց գրեանց նախ շարակնոցի և ապա ժամագրքի։ Վասն որոյ հայցեմ հարցդ բարեաց և եղբարցդ հարազատաց ծնեալք ընծայք սրբոյ աւազանին. եթէ ընթեռնուցուք կամ եթէ գրօսնուք ինչ ուսանիցէք զայս գրեանս, արժանի վարկջիք յիշել զերեւանեցի պարոն ուղուրլուի որդի զակէր յոհան որդանուէր քահանայն, և զհանգուցեալ ծնօղսն զհայրն իւր զպարոն ուղուրլուն և զմայր նորին զմաւումխաթունն, և զկողակիցն իւր եղիսաբեթն՝ և զեղբարս նորին զպարոն աւետիքն և զպարոն կարապետն՝ և քորք իւրեանց զխաթունն զրէկին զմարիամն և զկատարինէն, և զայլ արեանառու մերձաւորսն. քանզի աշխատեաց ի սրբագրութիւն ժամագրքին և զթուղթ շորացնելն և զայլս աշխատանս։ Նաեւ զջուղայեցի ընկերն մեր զուլիաթէնց խոճայ ալեքսանի որդի պարոն պօղոսն և զեղբայր նորին զպարոն պետրոսն, և զմայր նոցին զտիկին սոֆիայն՝ և զքոյր իւրեանց զտիկին եփրոսիմիայն և զդուստր քեռ նորա մաղդալինէն՝ և զայլ արեանառու մերձաւորս։ Հաւել յետոյ և զմեղապարտ զպիր մաթէոս շարադրող և մատակարարող և օգնիչ սրբագրութեան. յիշեսջիք զծնօղսն իմ զյոհաննէսն և զմարիամն և զեղբայրն իմ զպետրոսն, և զայլ արեանառու մերձաւորսն։ յիշելով զմիով հայր մեղայիւ. վասն որոյ և դուք յիշեալք ի Քրիստոսէ յաւուրն մեծոյ. Ամէն։

էջ 665–668

ԾԱՆՈԹ․ Երկու էջ առջեւէն եւ երկու էջ ալ վերջաւորութենէն ինկած։

Կիւլպէնկեան Մատենադարան

264-2

1686

51

ԺԱՄՈՑ։ Վենետիկ, տպ. Ջուղայեցի Պօղոսի և Թադէոս Քհնյ. Համազասպեանի։ 1686. 996 + 204 = 1200 էջ։

## ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԺԱՄՈՑ ԳԻՐՔ ԳԵՂԵՑԿԱՏԻՊ ԵՒ ՎԱՅԵԼՈՒՉ Դաղափարեցեալ ի մատենից Հնոց Թարգմանչաց Հայոց

digitised by A.R.A.R.@

Տպագրեցաւ ի հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի Տեառն Եղիազարու Սրբազան Կաթուղիկոսին

Ներ տպարանում Ջուղայեցի Խօճայ Սահրատի Որդի Պարոն Գասպարին:

Եւ Թաթէոսի Երեցու Երևանցւոյ Համադասեան:

Ի Թագաւորութեան Արամեան ազգի, Ցամսեանն Ցունվարի. ԺԱ:

Իսկ ի Թուին Փրկչին: 1686: Ի Վէնէտիկ:

ԸՆԾԱՅԱԿԱՆ

Բան առ երջանիկ Հայրապետն Հայաստանեայց Տէր Եղիազար Կաթուղիկոսն և
արժանաժառանգ յաջորդն Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին
ի յաւանդատոյց Գահին Սրբոյ էջմիածնի:

Մեծի Վեհափառութեանդ գերինչոյս պաշտպարան համբուրելով առաջակայի իրակութեանս տպագրութեան գիտումն խոնարհութեամբ մեծաւ զեկուցանեմ: Նկատելով իմ զպայծառութիւն այգին մերոյ որ ի առաչութենէ Հօգւոյն սրբոյ զոյր շնորհեցեալ ի ձեռն տպագրութեան, խանդաղատեր մէջ հոգի իմ: Իսկ զկնի սակաւուց ժամանակաց անցելոց ակնարկելով ի խանդարումն նորին. և ի պակասութիւնս եկեղեցականաց գրեանց, և մանաւանդ ճաշոցի և այլոց սոյին նմանեաց, վարանէի ի տարակուսանս և ի զանազանս խոկմունս բառ կարի, և բաղձէի առ պարգևիչն ամենից բարութեանց: Ուստի մխիթարիչն ամենայնի ասացեալ որ քննող է սրտից և երիկամանց, ոչ անտես առնելով զաղաչանս իմ՝ զփափաքանաց զառատացեալ անձն իմ՝ առաքել ինձ զժամացումն մասց՝ զիմէլ առ ազնուատոհմ և բարեպաշտ ճուղայեցի խօճայ սահրատի որդի պարոն գասպարն, և յայտնել նմա զիղձն իմ որ առ տպագրութիւնս գրեանցն հոգեշահեաց: Որ և հաճեալ ի բանս և ի գիտաւորութիւնս իմ խոստացաւ ողնել ծախուցն, և լնուլ զթերութիւն զոյիցն հարկաւորաց: Առաւել ստիպելով և իմ ընդ նմին զզուգնարեալ սրբիւնս իմ զորս ունէի. յանձնեաց զիս այցելութեան տեառն. և ազգերբ սրբազանից եկեալ ի յարաձանայ՝ չուեցի դէպի Մարսիլիա. ուր էր տպարան տեառն ունկանց վարդապետին: Եւ գտանելով զտպագրատունն տապալեալ՝ և խաղաղ բաղբաջեալ՝ և աւերեալ. զարձայ ի մայրաքաղաքն Վէնէտիկ: Ունելով ընդ իս զկատարեալ իմն ամեհացոյց ի գրեանց սրբոց որբագրեցեալ՝ և զգուշագոյն զաղափարեցեալ. եւ գերկուս և զիրս ճաշոցս հարուստ և ճոխ՝ մեծաւ հնարիւ ստոր և անոր հագել ի ձեռս արկեալս. բայց անհամեմատ և անբաղդատ ժամանց. թէ ընթերցուածովքն և թէ սղօթիւք եկեղեցականացն անդից. որոց վերայ տարակուսելով կայի ըն մեծի վարանման նկատելով ի տարաձայնութիւնս նոցին: Եւ օժնդութեամբ տեառն սատիկեցաւ մեզ առ ճաշոց իմն վաղեմեան ամբողջ և անթերի՝ ի գանձուց հնոց Թագաւորացն հայոց. զոր և ստորնթէր կեցեալ աստուածաշնչոյն ժամանից, գտի զնա ամենեւին համեմատ և համաձայն ընթերցուածովք զխորհուրդ և համարաքովք. Առաւել փառաւորեցեալ և ի բնաւից երկբայութեանց և տարակուսութեանց թեթևացեալ, զարբայականն ընտրեցի ինձ զաղափար. և զրադուցա զրամս վասնելով՝ և զանազանիւք երկամբք աշխատեալ. եւս բաղդակել զերկուս տեսակս աստուց նորակերտից. զմինն խաչարանէ, և զմիւսն մանրագոյն ի պէտս խորագրոց: Եւ հացեալ զնոսա կանոն և գեղեցիկ տպագրատան, սկսայ ի լոյս ածել զխորհրդատետր իմն պատարագի՝ բառ հնոց օրինակացն հայաստանեայց եկեղեցւոյ. և զճաշոցս այս վայելուչ և գեղեցկատիպ զարդարեալ՝ զանազանիւք թիւովք, ազգի ազգի ծաղկագրովք, և յարմարագունիւք պատկերովք: Եւ զայս խորհրդածութեամբ և հաւանութեամբ տեառն յովհաննու վարդապետի և արքեպիսկոպոսի զմիւռնոյ քաղաքի, որ բարեբաստաբար սատ առ զիպեցաւ ի յուսումն անձնանց իմոց ի փառս ամենասրբոյ երրորդութեանն՝ և ի զրօսանս հանուրց մանկանց եկեղեցւոյ: Արդ մաղթեմ ազերանօք ի քումէ սրբութենէ՝ զի հաճեցեալ հաւանեցես հայրականաւ քոյով զթութեամբդ ի ծախքարեան յառաջադրութիւնս իմ՝ և մի կշտամբեսցես զխստահութիւն անձին իմոյ: Քանզի ես ինձէն խոստովանիմ զանընդունակութիւնս իմ՝ առ այսպիսի վեհագոյն գործանութիւնս, թէև ապաւինելով ի շնորհս տեառն, և ի յաժանդաթիւնս սրբազանից բոլոց ազգաց մերոյ ի հանդէս: Զի և զգիշեր սատապելով ի աջնաթիւնս՝ և ի յերկուս որբագրութեան, ի համաձայնութիւնս թուոց տանց և գլխոց սաաւանդունչից գրոց, և ի կարգադրութիւնս հարցից՝ և ասզմոսաց՝ բառ աւուրցն պատշաճաւորութեան և յայլս բազումս իրս մանրամասնեայս բառ որում տեսանի: Որպէսզի վայելոցն զամենայն ինչ զիւրութեամբ և թարց աշխատութեան գտանելով, փառաբանեսցեն զսէրն բոլորից. ի խնդութիւն և ի հրճուանս բարեխօսաց, և ի յօգուտ մեծամասնի անձին իմոյ: Իսկ եթէ երևեսցի իր ինչ անպատեհ ի սմին, խնդրեմ ներել ինձ ի փառս ատուծոյ. զի չա-

digitised by A.R.A.R.@

բառարդողքն այլայլեալք եւ անկիրթք գոլով մերոյ լեզուի, զայսքանս հոգիս հնարել կարացի։

Ողջ լեր ի պարծանս եւ ի խնդութիւն համօրէն հաւատարմից քոյոց սիրելեաց։

Մեծի Վեհափառութեանդ ողիրատ ծառայ Թաթէոս երէց Համադանեան Երեւանեցի։

Կիւլպէնկեան Մատենադարան

204.6 ձա.

52

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ։ Վենետիկ, տպ. Ջուղայեցի Խաչայ Սահրատենց Տանն Շահրիմանեան, 1686. 4 չհ. և ԼԶ (36) = 40 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ Ըստ Արարողութեան Եկեղեցւոյն Հայաստանեայց։ Տպագրեցաւ ի Նորակերտ Տպարանի Ջուղայեցի Խաչայ Սահրատենց Տանն Շահրիմանեանի։ Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Եղիազարու Սրբազան Կաթուղիկոսին Համօրէն Հայկազունեաց։ Ի Թուականութեան Արամեան ռճլե։ Յամսեանն Յունվարի. ժը։ Իսկ ի Թուի Փրկչին։ 1686. Ի Վանատիկ Քաղաքի։ Արդեամբք եւ ծախիւք Պարոն Գասպարին.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի վախճանի աստուածային պատարագամատոյցի այսորիկ աղաչեմ զձեզ իմ անմեղադիր լինել խրթնութեան նորատիպ տառիս եւ գեղաչէն գործարանիս, որովհետեւ ամենայն իրաց սկիզբն դժուարութիւն է։ Եւ զի գրակերտքն գրաձոյլքն եւ գրաշարքն անվարժք գոլով, հազիւ զայսքանս հնարել կարացին մեծի աշխատութեան մէջ առիթք լինելով։ Բայց յուսամ թէ այսուհետեւ ամենայն ինչ ամբողջապէս ընթանայցէ առանց թերութեան Այժմ օգնութեամբ տեառն զսկիզբն արարաք ճաշոցին, որ թէպէտ գործ իմն տաժանելի է եւ դժուարին մեզ գործավարացս բայց յոյժ վայելուչ ձեզ վայելողացդ թէ ըստ ձեւոյն եւ թէ ըստ ճոխութեան։ Զոր եւ հաւատամ թէ հաճելի լինելոց իցէ ի փառս քրիստոսի եւ ի պարծանս ազգին մերոյ եւ ի գովեստ սրբազան Հայրապետին Տեառն Եղիազարու. եւ ի յիշատակ անջնջելի տանն Սահրատեան։ Արդ որք վայելէք զսա յիշեցէք յաղօթս։ Պարոն Գասպարն, եւ զնորաբողբոջ որդիս նորին Աղայ Ստեփանն, Սահրատն, եւ զԾատուրն, ամէն։

ԾԱՆՕԹ. Գրքին աւարտին՝ գրուած է հետեւեալ անունը, հաւանաբար իբր տպարանատէր. "Per Giacomo Moretti".

Կիւլպէնկեան Մատենադարան

264.5

1686

53

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ։ Վենետիկ, տպ. Ճիակոմօ Մորեթթի եւ Նահապետ Ագուլեցի. 1686. ՆԺԶ (416) էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

Ինկած է։

digitised by A.R.A.R.@

#### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք պատիւ եւ երկրպագութիւն բնաւից գոյից ստեղծողին եւ պահպանողին Աստուծոյ. Որ ետ զկարողութիւն հաւատացելոցս հասանել ի վախճան գեղեցկայարմարի շարագրութեան տեառն Ներսէսի հայոց հայրապետի. ի զաւարճութիւն ժամկանց եկեղեցւոյ: ի թուականութեանս մերում. ՌՃԼԵ. ի տասն նոյեմբերի. ի Վէնէտիկ կղզաքի ի Հայրապետութեան հայաստանեայց տեառն Եղիազարու սրբազան կաթուղիկոսին. Զոր բազում երկամբք սրբագրեցաք, եւ վաղնջականաց օրինակաց համեմատեցաք. Արդ որք վայելէք զսա ի փառս տեառն, յիշեցէք յաղօթս ձեր զյովհաննէս վարդապետն որ եղեւ ժառանգաւոր սորին. Եւ զագուլեցի խօճայ գուլնազարի որդի զխօճայ Նահապետն որ տպագրեաց եւ գոյիւք իւրովք ետ տպագրել զսա ի յիշատակ անձինն իւրեան, եւ ծնողաց իւրոց, իբրեւ զառհաւատչեայ նորակերտ տպարանի իւրոյ. Զոր կարգեաց ծախիւք բազմօք առ ի լոյս ածել զմեկնութիւն սաղմոսացն դաւթի մարգարէին ի պայծառութիւն տանն հայոց. Ընդ որս եւ զաւք յիշեալք լիջիք ի քրիստոսէ յաւուրն մեծին ամէն:

Կիւլպէնկեան Մատենադարան

811·21 Ծն·

### 54

ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՆՈՒԱԳ ՍԱՂՄՈՍԱՑՆ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ: Թրգմ. եւ կազմող Յովհաննէս Վրդ. Կոստանդնուպոլսեցի (Հոլով): Վենետիկ, տպ. Նահապետ Ագուլեցի, 1687, 840 էջ:

#### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՆՈՒԱԳ ՍԱՂՄՈՍԱՑՆ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ: Ժողովեցեալ ի զանազանից Մատենից Վարդապետաց Եկեղեցւոյ, Եւ Թարգմանեցեալ ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Եղիազարու Սրբազան Կաթուղիկոսին ի Նուաստ Յոհաննէսէ Վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ ի փառս Մեծապայծառ Աստուծոյ:

Եւ տպագրեցեալ Արդեամբք Եւ Գոյիւք Ագուլեցի Խօճայ Գուլնազարի Որդի Խօճայ Նահապետին ի սեփհական Տան Իւրում:

Ի թուականութեան Մերում ռճլզ. ի Վէնէտիկ Քաղաքի:

In Venetia, Per Naabiet de Gulnasar. 1687.

#### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Ի թուին հազար հարիւրեկի.
երից տասանց եւ հնգեկի.
ի ժամանակս հայրապետի.
Էջմիածնայ սուրբ աթոռի:

Եղիազար կաթուղիկոսի.
բնաւից եւ քաջ առաջնորդի.
յուսատուիչին փոխանորդի.
հայաստանեայց հովուապետի:

Յորդորանօք բարերարի.
յովսեփայ մեր վարդապետի.
զմիւռնոյ գահին առաջնորդի.
ճշմարտութեան քարոզողի:

Ես Նահապետ նուաստ հոգի.
որ եմ որդի գուլնազարի:
գեղջիս քրնիկ ագուլեցի.
զսաղմոսս շարադրեցի:

Ի նախերգանս մեկնչի.
բան սաղմոսին մեծի գութի.
զոր փափաքմամբ յոյժ խնդրեցի
եւ օգնութեամբ տեառն գտի:

Տեառնելով ի յայլ լեզուի.
յաճարեցայ յայսմ բանի:
ի փառս փրկչին մեր յիսուսի.
եւ ի յօգուտ հայոց ազգի.

digitised by A.R.A.R.@

յիշատակ անքակտելի.
եւ ի սփոփանս ընթերցողի։
զի զանձ է սա անպատմելի.
ուղիղ սրտիւ սաղմոսողի։

Քանզի պարզ է եւ հեշտալի.
եւ դիւրալցէս հասկանալի։
իւրաքանչիւր ցանկացողի.
լուծէ զկապ տարակուսի։

Աշխատանօք յոհանների։
տառամպոլյցի վարդապետի.
զոր ժաղթանօք աղաչեցի։
ձեռն արկանել այսմ գործի։

Զի այս էր իղձ իմոյ սրտի։
եւ կատարումն իմոյ ուխտի.
բարեսիրաց մերոյ ազգի.
թողուլ զսա յիշման տեղի։

Ակնարկելով օրինակի.
հրէից ազգացըն թարգմանչի.
այլ եւ յունաց գաղափարի.
եւ լաթինաց շարադրողի։

Բազում դրամբք վաստնեցի.
ի նեղութեան ժամանակի.
մինչեւ ըղձս տպագրեցի.
եւ ի վախճան իւր հասուցի։

Որ հաւանեալ իմում բանի.
արար զսկիզբըն այսմիկ տառի.
եւ աշխատամամբ իւրոյ ջանի։
հասոյց ի վերջ զիղձն իմ բարի։

Շնորհօք հոգւոյն պարգեւողի
եւ աղօթիւք աստուածածնի.
անարժանիս նպաստողի.
եւ տըկարիս ձեռն տուողի։

Որով քաղցեալըն կերակրի.
եւ ծարաւին արբուցանի։
մեղաւորաց յոյս պատրաստի։
տրտմեցելոց սիրտըն բերկրի։

Զուարթ սրտիւ հանդէս մտի
ըղձանրութիւնս ի յանձն առի.
վասն յուսոյն պարգեւողի։
զվարձս յերկնային տաղաւարի։

Արդ եթէ ոք սովաւ զմայլի։
եւ հոգեպէս մխիթարի։
յիշման առցէ զիս արժանի։
ի ժամու սուրբ պատարագի։

Եւ թէ գտցի սխալ լեզուի։
շարադրութեանս անարհեստի։
խնդրեմ ներել վասն յիսուսի։
անվարժութեան ձեր ծառայի։

էջ 3–4

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Բ

Առաջաբանութիւն Գրքոյս։

Ի վաղուց հետէ ցանկանալով ազուլեցի խօճայ գալուստարի որդի խօճայ Խաչատուրին մեկնութեանց սաղմոսացն դաւթի մարգարէին, խնդրեալ էր բազմիցս զնոյնն ի կոստանդնուպօլիս ի փարատումն տխրութեանց իւրոց. եւ ի սփոփանս հոգւոյ իւրոյ։ Եւ ի չկարելն գտանել զպարզախօս ամն հեղինակ, կամ զխակատար իմն, սխալեալ էր յանձին իւրում տալ շարադրել զնա երբեմն ի զեղակամ ժամու ի լրումն ըղձի եւ զխաղաղութեան իւրոյ. Ուստի ի զամենայն իւր վերաբին աստուածութեամբ շնորհօք առեալ ի քաղաքս այս վէնէտիկ. Թախանձանօք խնդրեաց ի հիւրսս պարզաբանել զնոյնն։ Ոչ վասն մարմնաւոր օգտի եւ շահասիրութեան իւրոյ, այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեաց. եւ ի յիշատակ անջնջելի իւրեան եւ ծնողաց իւրոց հանգուցելոց ի քրիստոս։ Բայց ոչ իբրթէ շարադրութեամբ, այլ աշխարհական լեզուաւ. զոր որում տեսեալ էր առ խաւսացեալս. զի ամենեքեան միահաղորդն դիւրալցէս հասկանալով, վայելեսցեն զնոյնն։

... Արդ ընկալարուք զսա ամենայն զուարթութեամբ եւ ողջմտութեամբ, եւ ի կիր արկէք ի փառս յիսուսի քրիստոսի, եւ ի յօգուտ անձանց ձերոց. յիշելով զպատճառս եւ զծառայակարարս սորին ի մաքրափայլ յաղօթս ձեր միով հայր մերիւ. ընդ որս եւ զուք յիշեալք լիջիք ի քրիստոսէ յուսոյն մերոյ ի միւս անգամ գալստեան նորին. լսելով զերանաւէտ բարբառն որ ասէ, եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւն ի սկզբանէ աշխարհի։ Ողջ լերուք։

էջ 5–7

digitised by A.R.A.R.@

Ես նահապետ զայս ասացեալ:
այս է որ զայս տպագրեալ:
Որպէս և է նախ գուշակեալ:
բուն բնագրումն շարադրեալ:

Բազում պիտոյ զայս համարեալ:
Նաև բղխերքն գոհացեալ:
Փափագ սրտիւ սովաւ անցեալ:
աստուածարան բանք հաստատեալ:

Տարակուսանք բանն բարձեալ:
և յիմարաց աչքըն բացեալ:
Դաւթի սաղմոսքն թարգմանեալ:
մարգարէականք հետ ընթացեալ:

Ծառայուածակայս կոչմէ եղեալ:
ոչ ի մտաց զայս արարեալ:
Եւ ոչ արժան զիս համարեալ:
անարժանիս արժան առեալ:

Բազում գրոց զայս ժողովեալ:
Թարգմանութիւն սովաւ լցեալ:
Աշխատանօք տպագրեալ:
զինչ պիտոյ էր ոչ խնայեալ:

Պայծառութիւն ազգի եղեալ:
Մեկնիչ զսա մեք անուանեալ:
Ուրախութեամբ զգուսն արկեալ:
մինչև ի վերջըն հասուցեալ:

Բանիցս անգամ զանազանեալ:
բան դժուարին ի սմա գտեալ:
Կիսակատար բզաս թողեալ:
զաշխատաւորքն արձակեալ:

Զափով զիրքս յոյժ ձիգացեալ:
զի աւելի ծաղիկ չինեալ:
Մինչև ի վերջըն կատարեալ:
ի ժամանակ զատըն գտեալ:

Ի յօգնութիւն տեառնէ խնդրեալ:
ի չորս լեզուացս թարգմանեալ:
Յունաց հրէից համաձայնեալ:
և լաթինաց շարադրեալ:

Հայոց լեզուաւ տպագրեալ:
աշխարհարար զայս ծանուցեալ:
Ըզյիշատակ բարի թողեալ:
ընթերցողացըն աղաչեալ:

Որք հանդիպիք և զիս յիշեալ:
յաղօթըս ձեր սուրբ և մաքրեալ:
Յոհաննէս վարդապետ խնդրեալ
և զկամս իմոյ ի տեղ կատարեալ:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Դ

Օրհնութիւն աստուծոյ հօր ամենակարողի, գոհութիւն որդւոյ նորա միածնի, և փառաբանութիւն հոգւոյն սրբոյ փառակցի պատիւ և շնորհակալութիւն համդերձ երկրպագութեամբ եռանձնեայ միութեան, և միոյ աստուածութեան այժմ և անդրաւ յաւիտենից ամէն: Որ բարեխաւութեամբ և աղօթիւք սրբուհւոյ աստուածածնին և միշտ կուսին մարիամու, և մաղթանօք և միջնորդութեամբ ամենայն սրբոց, ետ զկարողութիւն նուաստացելոյս պաշտօնէիցս ի բազմամիջա և ի յոգնախռովանս ժամանակիս հասուցանել ի կատար և ի վախճան զտպագրութիւն և զհոգեխորհուրդ պարզաբանութիւնս սաղմոսացն դաւթի մարգարէին ի փառս ամենամեծի անուան իւրոյ, և ի պարծանս սրբոյ եկեղեցւոյ, ի թուականութեան մերում. ռճլզ. սեպտեմբերի ամսոյ. ժ. ի վենէտիկ քաղաքի: Արդ որք վայելէք զսա առողջութեամբ ի շնորհս տեառն, յիշեցէք ի սրբազան աղօթս ձեր զագուլեցի խոճայ գուլնազարի որդի զխոճայ նահապետն, ընդ բնաւից ծնողաց և ազգականաց նորին հանգուցելոց ի քրիստոս, որ ազդեցութեամբ հոգւոյն սրբոյ. և յորդորմամբ բարեպաշտից ոմանց մերազնեայց ձեռնամուխ ի գործի գործառնութիւնս այս, և մեծաւ հոգաբարձութեամբ յառաջացոյց զթարգմանութիւն և զտպագրութիւն սորին, վասնզի զզայս և զինչս բազումս ի ծախսումն զեղջիկ տասիս, ի շինումն նորակերտ տպարանիս, ի գտումն պատուական թղթոյս, և ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւորաց, յայսմիկ նուաղեցելում ամի, յորում համայնք առևտրութիւնք զան խանգարեցելոյք, առ ի թողուլ զյիշատակ իւր անջնջելի զկնի ինքեան ի խրախճանս հանուրց հայկազնեաց ուսումնասիրաց և նշմարասէրաց, և ի ցնծութիւն ամենայն սիրելեաց և բարեկամաց իւրոց: Յիշեցէք ևս միով հայր մերիւ զագուլեցի մղտսի աստուածատուրի որդի զպարոն իմ զթօմայն, որ ամենայն ջանիւ անձանձիր աշխատեցաւ ի տպագրատանն և օգնեաց սրբագրութեան սորին, և ձեռնտու եղև միշտ յոհաննէս վարդապետին, յիշեցէք ևս և զայլս փորձաւորս որք աշխատեցան ի պիտոյս տպագրատանն, ընդ որս և դուք յիշեալք լիջիք ի քրիստոսէ յաւուր միւսանգամ գալստեան նորին: ամէն:

Կիւլպէնկեան Մատենադարան

223·2

1687

Կազմեց՝ Ա. Գ.

(Շար. 5)